

Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԵԹՈՒՄ ՊԱՏՄԻՉԻ ՆՈՐԱՀԱՅՑ ՔԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ
ԵՎ ՆՐԱ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ


Առամձնատիպ Հայկական ՍՍԾ Գլուխուրյան նների Ակադեմիայի
1948 թ. № 10 «Տեղեկագրից»

9(47.925)

57157

2-17 Гаваринъ, Ч.

Літературний музей
Музична література в Берліні.



ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅՑԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտուրյուններ 1948 թ., № 10 . Общественные науки

90(47.925)(092) Երևան Պատմութիւն

ԽՍՀՄ Վ. 1961 թ.

17

Ա. Հակոբյան

ՀԵԹՈՒՄ ՊԱՏՄԻՉԻ ՆՈՐԱՀԱՅՑ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ ԵՎ ՆՐԱ
ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԸ

Կալյուկադնոս (Սելիկիա) և Լամոս գետերի սահմանում, ավելի ճիշտ՝ Թաթլըսու (Քաղցր ջուր) գետի գետաբերանից մեկ ժամվագարճ դեպի հարավ-արևմուտք և Փերշշմալի գյուղի ավերակներից մոտավորապես ութ կիլոմետր հյուսիս-արևելք, ծովեղերքին, ընկած է Պատմական Կոռիկոս ամրոցը, որի դիմաց գտնվում է Ծովային Բերդ կղզին:

Կոռիկոսի իշխան Վահրամ մարածախում Հեթում Պատմիչի վկայությամբ 1220 թվին, Սիր-Աստանի անհաջողությունից հետո կազմակերպում է երկրորդ դավագրությունը թափուր գանձ գրավելու համար, սակայն Կոստանդին պայլի ջանքերով այս դավագրությունը ևս ճնշվում է:¹

Դավագրիները զրկվում են սեփական կայքից և կյանքից:² Հենց այս ժամանակ էլ Կոստանդին պայլը Վահրամից գրավում է Կոռիկոս բերդը: Հետագայում, երբ Կոստանդին պայլի որդին՝ Հեթումը Զապելի հետ ամուսնանալով ստանձնում է թագավորական իշխանությունը, Կոստանդին պայլը, որպես

1 «Ժամանակագրությունը երեք հարիւր և մէկ ամաց կարճ ի կարճոյ հաւաքեալ ի դանազան պատմութեանց հայ քուանկ և ասորի շարագրեալ պարոն Հեթում տեառն Կոռիկոսոյ, էջ 83:

Սույն աշխատությունը զանվում է նույն հեղինակի «Պատմություն թաթարաց...» աշխատության (Վենետիկ, 1842 թ.) հրատարակության կազմում Սիրի. Ասորու «Ժամանակագրություն» մեջ հանդիպում ենք վերօնիշյալ զետքերի ավելի մանրաւասն նկարագրության նաև զրույթ է:

«Եայս ժամանակի (Սիր-Աստանի սպանությունից հետո, Վ. Հ.) ումանք լիշխանացն հայոց ապատամբեալը կդեն ընդ Ռոբինայ բրինձին Անտիոքու, կամելով զնաթագաւորեցուցանել, յորոց էր ծոսլին մարածախու և կիւռն Կապնան տէրն և Կեռական և այլը, որք տակեալ զրբինձն Ռոբըն և մարն ի Տարսուս և ամրացան: Խոկ պարոն Կոստանդին և ամէ Ցավհաննէս կաթուղիկոնն զնացին զօրոք և պաշարեցին զնոսա սուր ինչ ժամանակս, և յաղթեցին նոցա և առին գրադարն, և բմբոնեցին զապստամբան որ և ամենեքեան բանտարգնալը եղեալ վախճանեցան ի կապանս, և հանգարստեալ երկիրն» («Ժամանակագրություն», Երուսաղէմ, 1871 թ., էջ 515—516):

A 33595
Մարտաչափաների ցանկում («Սիսուան», էջ 485, Ամրատ Գունդսարը, «Տարեկիթք», Փարիզ, 1859 թ., էջ 137) նույն անունով մարտաչափն չի հիշվում: Հակառակ Միիո. Ասորու վկայության այլ ժամանակշրջաններում մեզ հայտնի է ծոսլին անունով արքունի սենեկապիտ-հանգերածագիտ («Սիսուան», էջ 485). Նկատի ունենալով վերօնիշյալ հանգամանքը կարելի է ենթադրել, որ ներկինակը համարաբար շփոթել է պաշտոնները սենեկապիտի փոխարեն զրելով մարածախու եթե նիշը է մեր այս ենթագրությունը, նշանակում է այլ իշխանների թվում դավագրությանը մասնակցելու նաև ձուլին սենեկապիտը:

2 Կենտրոնաձեկ պետություն ստեղծելու նախապահով, Գ. Պանձակեցու վկայությամբ, Հեթում 1-ին թագավորի օրոք էլ Առաջարկուած Կոստանդին պայլը շարունակում էր անհաջանդ իշխաններին հետապնդու: Հազարանդին բառնայր ի միջոյ՝ զոման փախտական առնելով և զայլու ամրաւամբ («Պատմություն», Սիրի, 1909 թ., էջ 179):

թագավորահայը իր որդիների մեջ բաժանում է արքունի պաշտոնները և բռնազրաված բերդերը Ավագ որդին՝ Սմբատը նշանակվում է գունդստար, երկրորդ որդին՝ Բարսեղը դառնում է հոգևորական, Դրազարկի վանքի առաջնորդ, երրորդ որդին՝ Լուսն նշանակվում է մարածախտ, իսկ չորրորդ որդին՝ Օշինը ստանում է պայտության պաշտոնը,¹ իմիջիայլոց նաև Վահրամից գրաված Կոռիկոս բերդը:

Սմբատ Գունդստարը գծգրնում է հորից Կոռիկոս բերդը իր եղբորը՝ Օշինին հանձնելու առթիվ, լինելով ավագ որդին, նա իրեն է հարմար համարում տեր դառնալու այդ բերդին. Ընտանեկան այս անախորժությունը հարթելու համար նրանք օգնության հն կանչում իրենց փեսա Հովհան Իպլենին՝ Յովագերի կոմսին, որին վերազրում են Երուսաղեմի Ասիրիաների հավաքումը²

Վեճի լուծման մանրամասնությունները գտնվում են «Երուսաղեմի Ասիրիաների» 145-րդ գլուում, որտեղ Հովի Խոլի գրում է. «Ով որ տեր է դարձել մի կալվածքի կարող է այս երկրի օրենսդրքով կամ սովորությամբ այդ տալ իր ժառանգորդներից նրան, որին կցանկանա ... և ինձ այս ասացին սենյոր Սեթը, տեր Բելիանը և տեր Նիկոլ Անտիոխը, որոնց զենքերին Աստված օգնական լինի: ... եվ իս նրանց հարցրի այն, ինչ որ Հայաստանի պայլը ինձ հաղորդել էր, խնդրելով, որ իս նրանց հարցնեմ, թե Երուսաղեմի թագավորության օրենքներով ու սովորությամբ կմրող է իր գրաված կալվածքը տալ իր զավակներից նրան, որին ինքը կցանկանա... եվ ինքրեց, որ Կոռիկոսի մասին տեղեկացնեմ, որի տեր էր դարձել ինքը և որ նա ուզում էր տալ իր որդի Օշինին և թի պարոն Սմբատը, Հայաստանի գունդստարը, որ իր անդրանիկ որդին էր, հակառակում էր... ասելով թե իրավասու չէր, եվ այդ մասին ինձ հաղորդեց, որ իրենց տեղեկացնեմ, թե ինչ կարող է անել եվ նրանք (վերոնշյալ երեք անձնավորությունները. Վ. Հ.) ինձ ասացին, թե այն, այդպես է: ... Բացի այդ, քանի որ կալվածք գրավողը կարող է հանձնել կամ թողնել այն սենյորին որից բռնազրավել է և այդ անելուց հետո իր ժառանգորդները չեն կարող հետո կրկին ձեռք բերել կալվածքը այդ թագավորության օրենքներով կամ սովորությամբ, ուրեմն կարող է նույն օրենքներով կամ սովորությամբ այդ տալ իր ժառանգորդներից նրան, որին կցանկանա...: Իսկ ես այնպես ինչպես նրանք ասացին տեղեկացրի Հայաստանի հիշյալ պայլին և նա Կոռիկոսը տվեց Պարոն Օշինին...»:³

Այսպես հաստատվեց Կոռիկոսում Օշինը:

Համաձայն Սմբատ Գունդստարի վկայության՝ Օշինը մահացել է 1263 թվին:⁴ Նրան հաջորդում է իր ալվագ որդի՝ Թրիգորը, որի մասին ոչինչ հայտնի չէ. միայն մեկ հիշատակարանից պարզվում է, որ նա տա-

¹ Կ. Քանձակեցին համարաբ սրա մասին է ակնտրելում, երբ դրում է. «Կարգեց և զանդանիկ որդին զՍմբատ՝ զօրավար և՛ վիթան թիվան քաղաքության» (Ընդգծումը մերն է. Տ. Հ.), Կույն անդում, Էջ 179:

² Հմմ. Ալիքան, «Եղուշը հայրենեաց հայոց», Վենետիկ, 1921 թ., Էջ 469:

³ Ալիքան, «Սմբատան», Էջ 334–335: Նաև Հնատաղութիւնը նախնեաց սամկօրէնի վրայ, Հնանդ Յովիսանեան, Վիեննա, 1879, Էջ 388–389:

⁴ Սմբատ, «Տարբերք», Էջ 124: Ալիքան «Սմբատան»-ում Օշինի մահացն տարեթիվը դնում է 1265 թ. (Էջ 193, 336), իսկ 555-րդ էջում՝ 1264 թ.:

կավին 1280 թ. կենդանի էր¹ Դրիգորի մահից հետո Կոռիկոսը ժառանգում է նրա կրտսեր եղբայր Հեթումը, մեղ հայտնի պատմիչը²

* *

Եթե մի կողմը թողնենք Հեթում Պատմիչի պատվերով ընդօրինակված, մինչև հիմա մեզ հայտնի տոմարն ու քժշկարանը և ումանց կողմից նրան վերագրված մի քանի աշխատությունները (որոնց իսկությանը կամկածանքով է վերաբերվում Ալիշանը³), ապա կարող ենք հիշել Հեթում Պատմիչից մեղ հասած միայն հետեւալ աշխատությունները՝

ա. «Ժամանակագրութիւնք երեք հարիւր և մէկ ամաց կարճ ի կարճոյ հաւաքեալ ի զանազան պատմութեանց՝ հայ քուանկ և ասորի շարագրեալ պարոն Հեթմոյ տեառն Կոռիկոսոյց, որի ն տարրեր ընդօրինակությունները գտնվում են ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Մատենադարանում⁴ Սույն աշխատությունը հրատարակվել է Վենետիկում, 1842 թվին⁵

բ. «Պատմութիւն թաթարաց շարագրեալ ի Հեթմոյ Արամեան ի կարգէ Պոէմոնսղարատեսնց», Այս աշխատության հայերեն բնագիրը մեղ չի հասել Վենետիկի միիթարյան Մ. Ավգերյանը այն լատիներենից թարգմանել է հայերեն և «Ժամանակագրութեան» հետ մեկ տեղ հրատարակել է 1842 թ. Վենետիկում։ «Պատմութիւն թաթարաց» աշխատությունը հրատարակվել է և վրոպական զանազան լեզուներով մի քանի անգամ։⁶

Հեթում Պատմիչի մատենագրական մի գործը՝ հիշատակարանը, որը մինչև հիմա անհայտ էր, ներկա հողվածով ներկայացնում ենք զիտական հասարակությանը։

Հիշատակարանը ծավալով մեծ չէ, կազմում է ընդամենը փոքրագիր 5 էջ, Այս գտնվում է ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Մատենադարանի № 5613 ժողովածուի 349 ա—351 ա էջերում։

Ստորև բերում ենք № 5613 ձեռագրի նկարագիրը՝ բաղկացած է 376 թերթից, Մեծությունը՝ 16 × 12,5, Նյութը՝ թուղթ, Վիճակը՝ վասկած (կամ կրած և մաշված թերթեր), Գրությունը՝ միայուն։ Դիրք՝ բոլորագիր և նոտրգիր։ Ժամանակ՝ 1608 թ., Գրչության վայր՝ Կ. Պոլիս։ Գրիչներ՝ Հակոբ (էջ 161թ), Բարունակ սարկավագ (էջ 194թ), Դանիել տիրացու (էջ 348 թ), Մուրադ սարկավագ (էջ 375 ա) և ուրիշները։ Ստացող՝ տեր Ազարիա։

Հեթում Պատմիչի հիշատակարանը գրված է նոտրգրով, ոչ թե վերնուժ հիշված գրիչների, այլ մեկ ուրիշի կողմից։ Հիշատակարանը խորագիր չունի։ 349 ա էջի վերին մասից երկու տող բաց է թողնված, հավանաբար խորագիրը գրելու նկատառումով։

Այս հիշատակարանը չափազանց արժեքավոր մի վավերագիր է 13-րդ

¹ «Միտուան», էջ 336—337։

² Զամշեան, «Պատմութիւն Հայոց», հատոր Թ, էջ 279։

³ «Միտուան», էջ 339։

⁴ Տես № № 663, 1889, 2037, 3079, 5599, 7841 ձեռագրերում ներկա հիշատակարանը Մատենագրանի ձեռագիր բիբլոգրաֆիկ մատյանում սխալմամբ նշված է, որպես Հեթում Պատմիչի «Ժամանակագրության» հատված։

⁵ Սույն աշխատությունը գտնվում է նաև «Recueil des Historiens des Croisades. Documents Arméniens», tome premier, Paris, 1869, p. 471—490։

⁶ Հ. Անայեան, «Հայոց անձնանունների բառաբան», Երևան, 1946թ., հատոր Գ, էջ 76։

դարի երկրորդ կեսի Կիլիկիայի կյանքն ըմբռնելու համար, գրված է ընկճված, հուսահատական տրամադրությամբ, որն արդյունք է եղիպատական սուլթանների Կիլիկիա և շրջակա երկրները կատարած ավերիչ ասպատակությունների:

Ճիշտ է, ժամանակի անկումային տրամադրություններն արտահայտող մի քանի փաստաթղթեր մեզ հասել և արդեն հրատարակվել են՝¹ սակայն Հեթում Պատմիչի հիշատակարանը, վերջիններիս համեմատությամբ ունի մի շարք առավելություններ: Այսեղ հանդիպում ենք մի քանի կոնկրետ վկայությունների, որոնք հսարակորություն են տալիս զոյություն ունեցող որոշ ենթադրություններ ուղղելու կամ հաստատելու:

Ինչպես հայտնի է, եգիպտական սուլթան Ֆատիմահարի և նրա հաջորդների արշավանքները դեպի Կիլիկիա և լատինական թագավորության քաղաքներ, հայ պատմիչների կողմից նույնպես հիշվում են: Այսպես, Անտիոքի գրավումը Ֆնտիստարի կողմից Ստ. Օքբելյանը,² Հեթում Պատմիչը,³ Սմբատը՝ դնում են 1268 թվին, առանց ամսաթիվը հիշելու Ուսումնասիրողնեներից Ալիշանը «Սիրուանի» ժամանակագրության տախտակում Անտիոքի գրավման տարեթիվը նշում է 1268 թ. մայիսի 18-ին:⁴ Անտիոքի գրավման ձիւտ ամսաթիվը պահպես է Հեթում Պատմիչի առաջարկվող հիշատակարանում: Այդ մասին այնտեղ կարդում ենք. «Զմեծն Անտիոք զգարմանահրաշն և զգեղեցկաշնն, որ լնդ տէրութեամբ Բրնձին, զոր կործանեալ ի հիմանց աւերեաց Ֆնտուիտար սուլտանն, որ անուանէը Մելիք Տահր ի թուին Զձէ: (=1268) յաւուր շաբաթու ի ծաղկազարդին»:

1268 թ. զատիկը ընկնում է ապրիլի 8-ին,⁵ իսկ ծաղկազարդի շաբաթ

¹ Մեղ հայտնի են՝ «Կոստանդին Բ. կաթողիկոսի պահարան նշխարաց սրբոց ի վանս Սկեռայց» (Ալլեան, «Հայապատում», էջ 498—499), «Սուլտանն Եղիպատոսի գրաւել զկալուածո վրանից յաստիւ» (Հեթում Բ. «Հայապատում», 499—500), «Անումն Նոոմկայի յեզիդացուց, հաշուութիւն ընդ Հեթում Բ. և նույն տեղում, էջ 500—502», «Ցիատակ Հեթում Բ արքայից, նույն տեղում էջ 517—519: Նույնը «Արարատում», 1869 թ., էջ 39—41: «Դիբք Թղթոցի» Թօվմագրին 1298 թ. ընդունակության հիշատակարանը («Դիբք Թղթոց», Թիֆլիս, 1901թ., էջ 537—538), Ա. Այսումբայան «Ծուցակ հայերին ձեռագրաց Հալեպի...», Երևանին, 1935 թ., Հատ. Ա., էջ 347. Գ. Արվանդոյան, «Թողոս ազգար» մասն Բ, Կ. Պոլիս, 1885 թ., էջ 426: Գետ. Ջեռագրանան Խ 482 ժողովածուի 53թ էջում՝ Թողոս գրի հիշատակարանը: Վերջին հրատարակած չէ:

² «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օքբելեան արքեպիսկոպոս Սիլենաց», Փարիզ, 1859 թ., հատոր Բ., էջ 188.

³ «Պատմութիւն թաթարաց», Վենետիկ, 1842 թ., էջ 73: Նույն տեղում, «Ժամանակագրութիւնը», էջ 84:

⁴ «Տարեկիրք...» էջ 125: Սամվել Անեցին վերահիշյալ զեպքի համար նշում է 1272 թիւը—Ժամանակագրություն, Վաղարշ, 1893 թ., էջ 151:

⁵ «Միսուան», էջ 555: Զամշանը և Օքմանյանը այս դեպքը նշում են 1266 թվին («Հայոց պատմութիւն» հատոր Գ, էջ 265), «Ազգապատում», էջ 1663:

Հմմ. Երբակացու «Ելիթ» բարոնիկի ապյուսակի հան (պրաֆ. դր. Ա. Արքահամբան, «Երբակացու մատենագրությունը, Երևան, 1944 թ. էջ 270): Ֆրանսիացի հայունի տոմարաբան կ. Դյուկերոյի հաշվամեմբրը 1268 թ. գտրիկը ընկնում է ապրիլ 7-ին («Recherches sur la diorologie Arménienne», Par. m. Ed. Daulaurier, tome I, p. 417. Paris) Այս հաշվով ծաղկազարդի շաբաթ օրը կընկնի մարտի 30-ին Տոմարական հայկակերպում մեկ օգնել է Երևանի Աստղագիտարանի գիտ. աշխատող Վաթյան Լեռնը, որի համար հայտնում ենք մեր նորմակալությունը: Տոմարական մեր հայկակերպ արդյունքը ստուգեցինք ժաթեմատիկոս և աստղաբաշխ Գառսի գատկի օրը սրոշելու առաջարկած բանաձևով:

օրը կլինի մարտի 31-ը, այսպիսով Անտիոքը գրավել են 1268 թ. մարտի 31-ին, շաբաթ օրը:

Եգիպտոսի սուլթան Մելիք Աշրաֆի կողմից Աքբայի գրավումն ըստ Հեթում Պատմիչի,¹ Սմբատ Գունդստաբլի՝ ժամանակակից հիշատակարանի² և Ստ. Օբրելյանի³ կատարվել է 1291 թ., իսկ ըստ Սամ. Անեցու շաբունակողի՝ 1289 թ.⁴ Ուստի մասնակիողներից միայն Ալիշանն է նշում Աքբայի գրավման ամսաթիվը՝ 1291 թ. մայիս 15⁵ Ալիշանի աղբյուրը մեզ անհայտ է: Իրականում Մելիք Աշրաֆը, ինչպես մատնացույց է անում Հեթում Պատմիչն իր հիշատակարանում, Աքբայի գրավել է 1291 թ. մայիսի 18-ին:

Անա համապատասխան վկայությունը. «Եւ գիտուաւորն Պաղսմիդէ, որ նա ինքն Աքբայ, որ էր տուն իշխանութեան Դամփլուն և Ռապէթալին և այլոց անուանաւոր իշխանաց, շինեալ բարձագոյն պրճօք և հաստահիմն պարապօք, և գեղեցկայարմար տաճարօք, զոր կործանեալ տապալեաց անօրէն որդին Ալիք Մելիք Աշրաֆն, ի թուին Զե. ի մայիս Ժ.»:

Կարծում ենք, պարզ է ու անաւարկելի, որովհետև գործ ունենք դեպք Քերին ժամանակակից անձնավորության վկայության հետ: Սակայն ավելի հետաքրքիր են Հռոմկլայի գրավման տվյալները հիշատակարանում: Խնչպես հայտնի է Մելիք Աշրաֆի կողմից Հռոմկլայի գրավման մասին մեր պատմիչները ոչ միայն ամսաթիվ չեն հիշատակում, այլև ուժանք տարբեր տարեթվեր են հաղորդում:

Այսպես Ստ. Օբրելյանի,⁶ Հեթումը Պատմիչի,⁷ Սմբատ Գունդստաբլի,⁸ Ժամանակակից հիշատակարանի հեղինակի⁹ վկայության համաձայն՝ Աշրաֆը Հռոմկլան գրավել է 1292 թվին: Սամվել Անեցու շաբունակողներից մեկը հիշյալ գեղեցկայարմար ու Սմբատը վեց քաղաքների մեջ անհուշտ նկատի է ունեցել նաև Աքբայ:

¹ Հեթինիս հաշվումներով 1268 թ. գատիկը ընկնում է նույնպես ապրիլի 8-ին (տես «Հանդէս Ամորեայ» 1910 թ., էջ 149—151):

¹ «Պատմութիւն թաթարաց», էջ 74: Նույն տեղում, «Ժամանակադրութիւնը», էջ 85:

² «Տարեգիրք...», էջ 126: Սմբատի վկայությունը բավական ընդհանուր է. «Ի թակն 740 Աշրաֆն ջնշաց զբակացունեայքն ի Սենէն եւ էա զվեց քաղաքք: Կարելի է համար ձակ ասել, որ Սմբատը վեց քաղաքների մեջ անհուշտ նկատի է ունեցել նաև Աքբայ»:

³ «Հայապատմում», էջ 501:

⁴ «Պատմութիւն նահանգին Սիսական...», հատոր Բ, էջ 189:

⁵ Սմ. Անեցի, ժամանակադրութիւն, էջ 163:

⁶ «Սիսական», էջ 556: «Պատմութիւն նահանգին Սիսական»-ի հրատարակիչ է. Շահ-նապարյանն հրատարակության 150-րդ ծանրթագրության մեջ Աքբայի գրավման մասին գրում է. իսկ քաղաքն, զորմէ քանու է, ի հնութ կոչէր Պատուիմայիս, ի միջին դարու Աքբայ կամ Սէնժան ո՞ Աքբայ, ոչ հետի ի Կարմել լեռնէ... Ալիլ-Աշրաֆ յետ երկամսեայ պաշարման առ Պատուիմայիս ի 16 յունիսի 1291 ամի և ի սուր անխնույ կոսորեաց դապաստանեալուն ի նմա», էջ 357: Մեղ հայտնի չեն հրատարակի ոչ աղբյուրը, ոչ էլ հաշվումները, սակայն, ինչպես թիշ հետո ցույց կտանք, Մելիք-Աշրաֆը Աքբայի գրավել է 1291 թվի ոչ թե հունիսի 16-ին, այլ մայիսի 18-ին:

⁷ Պետ. Ջեազաքատան № 3425 մողովածում ժամանակադրության հեղինակի համաձայն Աքբայ գրավել են 1290 թ. մայիսի 18-ին (էջ 7): Սակայն այսուել էլ սիստ է նշված տարեթիվը:

⁸ «Պատմութիւն նահանգին Սիսական...», հատոր Բ, էջ 192:

⁹ «Ժամանակադրութիւն», էջ 85:

¹⁰ «Տարեգիրք...», էջ 126:

¹¹ «Հայապատմում», էջ 501:

¹² Սամվել Անեցի... 153: Հրատարակչի ձեռքի տակ գանվող չորսորդ ձեռագիրը հեյցալ դեպքը դնում է 1292 թ. նույն տեղում, էջ 153. տես տաղատակի տարբերությունը:

թվին՝¹ Ուսումնասիրողներից Զամշյանը² 1294 թվին, իսկ Ալիշանը՝ 1292 թ. հուլիսի 28-ին³: Վերջինիս աղբյուրը նույնպես անհայտ է մեզ: Առաջին պատմիչները չնայած ճիշտ են նշում Հռոմեան գրավելու տարեթիվը՝ 1292 թ., սակայն չեն նշում ամսաթիվը, իսկ Ալիշանի նշած ամսաթիվը իրականից հաշված է մեխ ամիս ուշ:

Հեթում Պատմիչի հիշատակարանը մեղ տալիս է այդ դեպքի հաստատ և անվիճելի դատան: Այս առթիվ հիշատակարանում կարդում ենք. «Ամանապէս և սա (Մելէք Աշրափը. Վ. Հ.) այնքան ներողութեամբն Աստուծոյ և յաճախութեամբ մերոցն մեղաց գորացեալ, մինչ զի առ զաթոռ հայրապետութեանն հայոց՝ զիլայն Հռոմայական, ...ի թուին ԶիԱ. յունիսի իլ»:

Այսուհետեւ հիշատակարանում Հեթում Պատմիչը նկարագրում է Հռոմեկայի համար մղվող կոփիլսերի համառ բնույթը, որով հաստատվում է Ստ. Օրբելյանի այդ մասին տված վկայությունը:

Ըստ հիշատակարանի հաղորդած տվյալների այդ կոփիլսերում մինչեւ իսկ օգտագործել են ժամանակի ռազմական տեխնիկայի նվաճումները՝ շնորագործ մեքենայից, Հռոմեայի համար մղված կոփիլսերն ըստ Սմբատ Գունդստաբը տևել են «շատ օրեր»⁴, իսկ Օրբելյանը հիշում է «ամսորեաց ժամանակաւ»,⁵ որի ընթացքում, ինչպես վկայում է Հեթում Պատմիչը, պաշարողները Հռոմեային գրավելու համար դիմել են մի շարք միջոցառումների «...և անհուն զօրօք և բազմաձեռն պատերազմողօք և նորագործ մեքենայից հնարաւորութեամբ պատեալ պաշարեաց սղարեալ բարանօք ի վերուստ և քարափոր ծակամտօք նաղմերով ներեալ ի ներթուստ...»⁶

Այս կոփիլսերի ընթացքում պաշարվածները այնքան համառ և հերոսաբար են կովել, որ Մելիք Աշրափը միտք է ունեցել նույնիսկ թողնել Հռոմեայի պաշարումը՝⁷ ի վերջո եղիպատական զորքերին հաջողվում է գրավել նախ քաղաքը, «ապա զներքին բերդն, և ապա զբարձրագոյն կայս յորում կայը շինեալ գեղապանոյն եկեղեցին...»⁸: Հայերի համառ դիմագրությունը եղիպատական զորքերի մեջ առաջ է բերում կույր ատելություն: Այդ պատճառով Հռոմեային գրավելուց հետո բնակիչների և այնտեղ պատըսպարվածների մի մասին անխնա սրի են քաշում, մյուս մասին գերեվարում, իսկ կաթողիկոսական հարստությունները ենթարկում թալանի: Այս դեպքերի առթիվ Հեթում Պատմիչը հիշատակարանում կարդում ենք:

«...Յորում (Հռոմեայում. Վ. Հ.) էր և աջ մերոյ սուրբ Լուսաւորչին, և առաքելական և մարտիրոսական նշխարք, և սրբութիւնք անթիւք և կտակարանք աստուածային գրոց զանձնեալ բազմութեամբ, ...գերեաց զտէրըն և դհայըն մեր հոգեոր, վկաթուղիկոսն ամենայն հայոց զտէր Ստեփանոս, եպիսկոպոսօք և վարդապետօք, քահանայիւք և անհամար քրիստոնէ-

¹ Նույն տեղում, էջ 163:

² «Պատմութիւն Հայոց», հատոր Բ, էջ 287—288:

³ «Սիստում», էջ 556: Ալիշանից օգտել է Օրմանյանը—Աղքապատում, էջ 1732:

⁴ «Տարեգիրք», էջ 126:

⁵ «Պատմութիւն նահանգին Սիսական...» հատոր Բ, էջ 190:

⁶ Ամել ժամանակակից հիշատակագիր և պատեալ պաշարեաց զնա (Հռոմեային. Վ. Հ.) բազմաձեռն պատերազմօք, բարձրածիգ (բար) անօք ծանր քարանց, քարանտականօք, և բազմաթիգ դարանամուք...», «Հայապատում», էջ 501:

⁷ «Պատմութիւն նահանգին Սիսական...» հատոր Բ, էջ 191:

⁸ Նույն տեղում, էջ 190:

իւք և սպառեալ զաղգն քրիստոնէից»:¹ Հետաքրքիթ է նաև հիշատակարանի այն վկայությունն, ըստ որի «... Բնակեցոյց ի հայրապետանոցին և ի կեղեցկապաճոյն աաճարին՝ զուրացողսն Քրիստոսի»: Վերոհիշյալ խոսքերը հավանաբար վերաբերում են այն հայերին, որոնք կոտորածից փրկվելու համար ընդունել էին մահմեղականություն:

Արտաքին թշնամու հաճախակի կրկնվող արշավանքներն ու ասպատակությունները, որը Կիլիկիայում ստեղծել էր անապահով վիճակի,² հատկապես 1289 թ. Տրապոլսի գրավումից ի վեր, ստիպում է Հեթում Պատմիչին թողնել Կոռիկոս ամրոցը և պատսպարվել անմատչելի Ծովային Բերդ կղղում, որոյ գտնվում էր Կոռիկոսի դիմաց:

Մեր կարծիքով Հեթում Պատմիչը Ծովային Բերդ կղղի տեղափոխվել է 1289 թ. Տրապոլսի գրավումից անմիջապես հետո, այդ երկում է նրանից, որ եղիպատական սուլթանների 1289 թվի և հաջորդ տարիների արշավանքները թվելուց հետո, նա հիշատակարանում նորից անդրադառնում է 1289 թվի Տրապոլսի գրավմանը և ապա ավելացնում:

«Եւ վասն այսորիկ յաճախեաց ան և երկեղ ի վերայ ամենայն քաղաքաց ծովեղերեայց. վասն որոյ և ես Հեթում մտախոն եղեալ գտանել տեղի ամրոցի և ապաստանի գուշանալ յանօրինացն սրոյ մերոցն քըիստունէից»:

Հեթումն ապաստանելով կղղում, ինչպես երկում է հիշատակարանից, դրադիվել է շինարարական աշխատանքներով, որոնց նպատակն էր նախ ամրացնել կղղու պաշտպանունակությունը:

Շինարարական աշխատանքների վերաբերյալ հիշատակարանում կարդում ենք. «... լ յարմարեալ շինեցի զա բազում ծախիւմ և մեծ փափագանօք և վասն ընակչացն մխիթարութեան շինեցի տաճար Աստուծոյ և տուն աղօթից զուուը եկեղեցիս որ ի մէջ կեղեցկաշէն ամրոցի բերդիս...»:

Դժբախտաբար Հեթում Պատմիչը կոնկրետ չի նշում թե ինչ կառուց ցումեներ է կատարել սակայն կարծում ենք ճիշտ վարված կլինենք, եթե ընդգծված բառերը մեկնաբանենք որպես ռազմական բնույթի կառուցումներ, այլ կերպ էլ չէր կարող լինել, որովհետեւ հաճախակի կրկնվող արշավանքներից սարսափած մարդիկ ապաստանելով կղղում, նրանք պաշտպանության հույսը չէին կարող կապել միայն կղղու ընական ամրության հետ:

Շինարարական աշխատանքների մասին հիշատակարանի վերոհիշյալ վկայությունը հնարավորություն է տալիս մեզ որոշակիորեն պարզել Ալիշանի անորոշ մի ենթադրությունը: Դ. Ալիշանը խոսելով Ծովային Բերդ

¹ Հմմ. Ժամանակակից հիշատակագրի հետ. «... զերեաց և զուուը հայրապետան մեր դկաթողիկոսն Տէր Ստեփանոսու, հպիսկոպոսը և քահանայիւր և անթիւ քրիստոնէիւր... զի քահանայր և արք փառաւորը անկան ի ոուր, և կանայր պատուականաց անարգեցան, աստուածայիւր կտակարանքն յանօրինաց ձեռաց յափշտակեցան, առաքելակոն և մարտիրոսական նշխարք սըրոց խորտակեցան զարդն ոսկոյ և մարգարատ և ականց պատուականաց որ ի վերայ սըրութեանց՝ կղղուպահցաւ» («Հայապատում», էջ 501):

² Պատմութիւն նահանգին Սիսական...», հատոր Բ. էջ 190—191. «Եւ առեալ յաւարի գերեզն՝ կապտեցին, կողմապեցին զամենայն սպաս եկեղեցւոյն և զանկնելի զանձն աստուածային և զամենայն ստացուածոն, բայց զեկեղեցին ոչ քակեցին»:

³ Այս առթիվ առաջարկվող հիշատակարանում կարգում ենք. «... զեկերային զաւուսն մեր ըսլոր սահմանօք ի ձեռն սրիկայից արանց արաբացոց և թուրքաց գերեզմիշտ և աւերելը և անբնակ առնէքը»:

կղղում կատարված կառուցումների մասին,¹ հենվելով շենքերից մեկի մասցըներում գտնվող առաջին արձանագրության մեջ պահված «Լևոն» անվան վրա, կարծում է, որ այդ կառուցումները կատարել է Լեռնոր, Զնայածնա չի նշում թե խոսքը որ Լեռնի մասին է, սակայն կարծում ենք ճիշտ հասկացած կլինենք, եթե այն վերագրենք Լեռն Ա. թագավորին (1198—1219 թ.):

Երկրորդ արձանագրությունը, որը մեզ հասել է բավական աղձատումներով՝ հետեւյալ պատկերն ունի.

«Ի թուակա(նիս) Հայոց Զ ամին՝ եւ եւթն....թիուն ի բարեկա(շա) թագուորին Հեթմ թաշգէ ամրոց Սլթանին. շինել մեծ իշխան Հեթմոյ Ո.»²

Այս արձանագրության մասին Ալիշանը որոշակի բան չգրելով ավելացնում է «... յորում (արձանագրության մեջ, Վ. Հ.) անուն թագաւորին Հեթմոյ յայտնի և թուական Զ ամին, թերես ի նոյն յաւելեալ եւրն, ըստ աղաւաղ Ընդօրինակութեան Լանկուայց»³ (Ընդգծումը հեղինակինն է):

Ինչպես երկում է արձանագրության մեջ գտնվող տարեթվի վերջին թվականի ուղղումից՝ $700+7+(551)=1258$ թ., Լանկուան և Ալիշանը արձանագրությունը հետևապես և այդ կառուցումները վերագրում են Հեթում Առաջինի թագաւորության շրջանին (1226—1270 թ. թ.): Նրանք իրենց այդ կարծիքը հիմնավորել են Ռուբամ Ռուբրյուկի մի վկայությամբ: Ինչպիս հայտնի է 1255 թ. Ու. Ռուբրյուկը եղել է Կիլիկիայում և այցելել Կոստանդին պայլին, այն ժամանակ, երբ վերջինս իր որդի՝ Հեթում Առաջինի Մոնղոլիայից բարեհաջող վերադարձի առթիվ կաղմակերպել էր իրնանույքը: Այդ ասթիվ Ռուբրյուկը գրում է, «Ես գտա նրան (Կոստանդին պայլին, Վ.Հ.) Ասիսում (Սիս) իր բոլոր որդիների հետ միասին, բացի մեկից՝ կոչված Բարունուսին (պարոն Օշին), որ կառուցել էր տալիս մի դղյակ...»⁴:

Ալիշանը հենվելով վերոհիշյալ վկայության վրա Օշինի կողմից կոռպուում կատարված շինարարական աշխատանքների ավարտումը դնում է 1258 թվին:⁵

Մենք չենք կասկածում Ռուբրյուկի վկայության վրա, սակայն ցանկանում ենք նշել, որ վերկում մեջ բերված երկրորդ արձանագրությունը և զրա հետ աղերսվող կառուցումները, ամենայն հավանականությամբ կատարվել ենուշ թե Հեթում Առաջին թագավորի ժամանակ Օշինի կողմից, այլ հետագյում Հեթում Երկրորդի ժամանակ Հեթում Պատմիչի կողմից:

Այս եզրակացությունը հաստատվում է ուշագրավ հետեւյալ փաստերով:

¹ «Սիսուան», Էջ 336:

² Վերոհիշյալ արձանագրությունը բավական աղավաղութերով ընդօրինակել է Վ. Լանկուան Ալիշանը շնավանելով վերջինին ընդօրինակությանը, տորբեր առիթներով զրում է «...այլ ըստ ոչ բարդի՝ ցարտ չենատ առ մեզ զբոյզ օրինակ, ով յանօրինակութեան Լանկուայ յամի 1852, չեթ և ոչ մի ի թուականացն անսուալ, կամ՝ ըստ աղաւաղ ընդօրինակութեան Լանկուայ...» կամ՝ «իսկ լատելուայի խոռն ի խոռն և լազմասխալ կաղավարածնային է...» (Սիսուան», Էջ 336):

³ Նույն տեղում, Էջ 336, Ժանոթ. 2:

⁴ «Սիսուան», Էջ 336:

⁵ «Ընդգրություններ» հատուր, Ա., ՓԴ—ՁԶ, Եղեան, 1932 թ., Էջ 26:

⁶ «Սիսուան», Էջ 334: Այս թե ինչու արձանագրության տարեթվի վերջին թվաշանը, որը մեզ չի հասել Լանկուան և Ալիշանը ըրացնում են 7-ով:

Նախ, ինչպես վերսում ցույց տվինք, Ալիշանը արձանագրության Վ. Լանկլուայի ընդօրինակությանը կասկածանքով է մոտենում, հետեւապես չի կարելի պնդել, թե արձանագրության տարեթվի վնասված մասը պիտի անպատճառ լրացնել 7-ով (որի գեղագում ստանում ենք 1258 թվականը):

Երկրորդ, Ռուբրյուկի այն վկայությունը թե՝ Օշինը Կոստանդին պայմի մոտ չէր և «կառուցել է տալիս մի դյակ», մեղ իրավունք չի տալիս եզրակացնելու, թե նա չէր կարող կառուցելիս լինել մի այլ դյակ, և խոսքը անպատճառ պետք է վերաբերի Ծովային Բերդ կղզուն, ինչպես կարծում են Լանկլուան և Ալիշանը Նկատի ունենալով Ու. Ռուբրյուկի վկայության այն մասը, ըստ որի նա սկզբում լինում է Կոռիկոսում (մայիսի 5—17):¹⁾ և ապա գնում Սիս, թերեւ հնարավոր է ենթագրել, որ Օշինը կառուցողական աշխատանքներով էր զբաղված Կոռիկոսի ծովեղորյա ամրոցում և ոչ թե Ծովային Բերդ կղզում:

Երրորդ՝ մեզ հուզող համար պարզաբանման համար բանալի կարող է հանդիսանալ քննության ենթակա արձանագրության վերջին տողը, որտեղ կարդում ենք. «... շինել մեծ իշխան Հեթմոյ Ու...»: Այստեղ ակամա հարց է ծագում, եթե կառուցումները կատարել է Օշինը (Հեթում Պատմիչի հայրը) Հեթում Ա.-ի ժամանակ և թողել համապատասխան արձանագրություն (ինչպես կարծում են Լանկլուան և Ալիշանը), ապա Ի՞նչ գործ ունի այնտեղ ևմեծ իշխան Հեթումը»:

Զենք կասկածում, որ արձանագրության մեջ հիշված Հեթումը մեր հիշատակարանի ու «Պատմության» հեղինակն է, որը 1287—1304 թվերին եղել է պայլ,²⁾ ուստի և արձանագրության մեջ կարող էր կոչվել «մեծ իշխան»: Արդ՝ նկատի ունենալով արձանագրության «...շինել մեծ իշխան Հեթմոյ» հատվածը մի կողմից և հիշատակարանի վկայությունը Ծովային Բերդ կղզում Հեթում Պատմիչի կառուցումների մասին մյուս կողմից, երկրորդ արձանագրությունը և որպա հետ աղերսվող կառուցումները վերագրում ենք Հեթում Պատմիչին, Այսպիսով Հեթում Պատմիչի հիշատակարանը հնարավորություն է տալիս վերոհիշյալ արձանագրությունը և Ռուբրյուկի վկայությունը նոր ձևով մեկնաբանել:

Հիշատակարանի մի վկայությունից պարզվում է, որ Հեթում Պատմիչը Ծովային Բերդ կղզու նորակառույց եկեղեցու համար 1293 թ. ընդօրինակել է տվյլ մի Ավետարան: Այս տվյալը ցույց է տալիս, որ 1293 թ. արդեն կղզում ավարտված են շինարարական աշխատանքները: Հետեւապես արձանագրության տարեթվի վնասված մասը պետք է լրացնել ոչ թե 7-ով, ինչպես առաջարկում են Լանկլուան և Ալիշանը, այլ և (40) կամ և (41) թվանշանով:

Սույն հիշատակարանը ուշագրավ է մեզ համար նաև մի այլ կողմով: Հեթումն իր յուրայիններով ապաստանում է Ծովային Բերդ անձատույց կղզում և ապահովում իր մերձավորների և ֆեոդուլական դասակարգի այլ ներկայացուցիչների կյանքը եղիպատացիների սրեց, իսկ ժողովուրդը թող-

¹⁾ Ու. զենքը թյունները, համար Ա, էջ 25:

²⁾ Հեթում Պատմիչը 1294—1305 թվերին վարել է նաև գունդստարլի պաշտոնը՝ («Տարեկիրը...» էջ 137, Ալիօսն, «Սիսուան» էջ 484): Այս պաշտոնը վերոհիշյալ հարցի քննության կապակցությամբ պաշտույցի դեր չի կարող ունենալ:

Նըլվում է բախտի քմանաճռյեցին անապաստան ու անօդնական։ Այս փաստը ցույց է տալիս Գեղողալական հասարակության քաղաքացու հայրենասիրության պատկերացման ներ շրջանակներու¹

Հիշատակարանում պահպանվել են նսեւ Հեթում Պատմիչի ըոլոր զավակների և կնոջ անունները: Հիշատակարանի գրության թվականի որոշման համար կարենոր է այն հանգամանքը, որ մինչդեռ այստեղ հիշատակված է Ստեփանոս կաթողիկոսի և այլոց գերեվարությունը, բայց ոչ մի խոսք չենք գտնում նրա մահվան մասին: Ստեփանոսը մահացել է գերեվարությունից (1292 թ.) մեկ տարի հետո՝ 1293 թվին,² հետեւապես սույն հիշատակարանը գրված պետք է լինի 1293 թվին:

• 3

349 ^ա Արդէ՝ յայսմ ժամանակի ցաւէր աշխարհ ի բրեկ զծեր և երկնէր
որպէս զմայր և ծըփէր որպէս զծով, և առաւել ևս ազգք քրիստոնէ-
ից և եկեղեցի Քրիստոսի ամբոխնալ խոռվէր ի բրեկ ի հողմոց շնչանէ
յանօրինացն յարուցմանէ. որով և երկիրս հայոց որ ի սահանգիս
5 կիլիկոյ, որում տիրէին քրիստոսապակք թագաւորք սերեալը ի Յը-
որինանց զարմէ, և իշխանք զաւառատէրք ի նոցունց ազգակցու-
թենէ. սաստիկ և անձնարին նեղութեամք վշտանայր յեզիպտական
ազգէն, ի զազանամիտ և զոռոզաբարու սուլտանացն, որք տիրէին
անդ յաւուրս մերոյ ժամանակաց, որք և մաշեալ սպառեցին և աւե-
բեալ չնչեցին զծովեղերեալ (յ) աշխարհն յորում Բնակեալ էին արի-
ական ազգն Ֆոռանգաց. Զմեն Անտիոք զզարմանհրաշն և զգեղեց-
կաշէնն, որ ընդ տէրութեամք բրնձին, զոր կործանեալ ի հիմանց,
աւերեաց Ֆնատութատը սուլտանն, որ անուանէր Մելիք Տահր, ի թու-
ին Զժէ, յաւուր շաբաթու ի ծաղկազարդին: Եւ զՊ. պարսպեանն Տրա-
349 ^բ 15 պօլիս, // զոր առ Ալֆի սուլտանն Մելիք Մնտոր, ի թուին ԶԼ.՝³
Եւ զիառաւուն Պաղոսմիթէ, որ նա ինքն Աքայ, որ էր տուն իշխա-
նութեան Դամպիլուն և Ռապէթալին և այլոց անուանաւոր իշխանաց,
շինեալ բարձրագոյն պրճօք և հաստանիմն պարսպօք և զեղեցկայր-
մար տաճարօք, զոր կործանեալ տապալիսաց անօրէն որդին Ալֆէ
Մելիք Աշրաֆն, ի թուին Զթ. ի մայիս ԺԲ: Որ և սաստկագոյն քան
զայլ զոռոզն զոռայր, ի բրեկ զամայ կարկտածին ի վերայ մերոյ աշ-

¹ Պ. Բաբունքը իր ստանավոր պատմության մեջ վերոհիշյալ երեսութը հիշում է տարրեր առիթներով, օրինակ, խոսելով Ֆնախտարի 1274 թ. Կիլիկիա արշավելու մասին, դրույմ է.

«Եւ բովանդակ՝ ի սորելամշածեալ
Զոր ի զաշտոց՝ վայրս զտեալ,
Բայց թե յամբոցս՝ ո՞ր ը բնակեալ
Եւ կամ ի զդեակ՝ ուրեք զաղիքեալ,
Նորք միահա՞ւ եղեն մեացեալ»

Էջ 222 (անս նաև 224-րդ էջում), Նման վկայություն ունի նաև Մարզպետ Արեգան
(«Մարզպետ Արեգայի Պատմություն վասն աղջին նետողաց», Ս. Պետերբուրգ, 1870 թ.,
էջ 39—40).

² «Պատմութիւնն» նահանգին Սիսական...» հատոր Բ, էջ 191. Սև. Անեցի, Ժամանակագրություն, էջ 153:

³ Պետական Զենազդարաւառ № 3425 ժողովածուի մեջ գտնվող ժամանակագրության հետինակը Ծրաբագիք գրավումը դնում է զԼի. (1288 թ.) ապրիլի 15-ին, էջ 7ու

խարհիս. և ծանրացոյց առաւել սաստկութեամբ զպահանջումն հարկին: Եւ զեղերային գաւառն մեր բոլոր սահմանօք ի ձեռն սրիկայից արանց արարացոց և թուրքաց գերէր միշտ և աւերէր և անընակ առնէր: Եւ ըստ բարելացոց բոնաւորին, ձևացեալ երկնահաս ծառոյն, որ այնքան բարձրացեալ նա՝ մինչ յերկնանմանն երուսաղէմ քաղաքն Աստուծոյ հասեալ, առ զնա և գերեաց զսպասս սրբութեան տաճարին Աստուծոյ Նմանապէս և սա այնքան ներողութեամբն

350ա Աստուծոյ և յաճախութեամբ մերոցն մեղաց զըրացեած // մինչ զի առ զաթոռն հայրապետութեանն հայոց՝ զկլայն Հոռմայական, յորում էր և աջ մերոյ սուրբ Լուսաւորչին, և առաքելական և մարտիրոսական նշխարք, և սրբութիւնք անթիւք և կտակարանք աստուտծային վրոց գանձեալ բազմութեամբ, զոր և անհուն զօրօք և բազմաց պատերազմողօք, և նորագործ մեքենայից հնարաւորութեամբ

355 պատեալ պաշարեաց, սղարեալ բարանօք ի վերուստ և քարափոք ծակամտօք՝ նազմելով նեղեալ ի ներքուստ, առ զաստուածաշէնն զայն և զհրաշալի դղեակն վայելչազեղ, ի թուին ԶիԱ. յունիս ի՛: Դերեաց զտէրն և զնայրն մեր հոգեսր, զկաթուղիկոսն ամենայն հայոց զտէր Ստեփանոս, եպիսկոպոսօք և վարդապետօք, քահանայիւք և անհամար քրիստոնէիւք և սպառեալ զազգն քրիստոնէից: Եւ բնակեցոյց ի հայրապետանոցին և ի զեղեցկապանոյն տաճարին զուրացողսն Քրիստոսի: Եւ եղել այն սուզ մեծ ամենայն եկեղեցեաց, մանաւանդ ազգին հայոց, որք կրեցին զկալիծն ողորմելի և զաղէտն աշխարհաց:

350բ 45 Արդ՝ զի յայսմ ժամանակի այսպիսի նեղութիւնք ժամանեալ հասեալ ունէր զեկեղեցիս Քրիստոսի և զի որպէս ասացաք յառաջ քան զայս, Զլէ. թուին եղել աւերումն Տրապօսոյ յԱլֆէ: Եւ վասն այսորիկ յաճախեաց ան և երկեղ ի վերայ ամենայն քաղաքաց ծովիզերեաց: վասն որոյ և ես Հեթում մտախոն եղեալ գտանել տեղի ամրոցի և ապաստանի, զգուշանալ յանօրինացն սրոյ մերոցն քրիստոնէից և տենչացեալ ցանկացաց զեղեցկադիր այսմ կզզոյս, որ հանդէպ մերոյ աստուածապահ ամրոցիս: Եւ յարմարեալ շինեցի զսա բազում ծախիւք և մեծ փափականօք, և վասն բնակչացն միխթարութեան շինեցի տաճար Աստուծոյ և տուն աղօթից՝ զտուրբ եկեղեցիս, որ ի մէջ զեղեցկաշէն ամրոցի բերդիս: Յորում և ի պէտս լուսաւորութեան հոգւոց, որպէս ծառն կենաց ի մէջ դրախտին, և Աւետարանս Քրիստոսի պիտոյ էր այսմ դրախտի եկեղեցւոյ, զոր և ետու գրել ի լուսաւորութիւն հոգւոց ի տաճարս այս աղօթողաց և յիշատակ բարեաց ինձ և ի մասն յապազայս ժամանակաց և փրկութիւն հոգւոյ-իմոյ 351ա 60 ի հան // զերձեալ կեանսն յարդարագատ անեղ ատենին Քրիստոսի և եղեւաւարտումն գրութեանսորա ի թուին ԶիԲ. ի ժամանակի յորում ունէր զաթոռ թագաւորութեան երկրիս հայոց օրինապահ և առաքինասէր և եկեղեցացարդ պարոնն ամենայն հայոց Հեթում որդի Լեռնի բարեպաշտի, որ միխթարութիւն էր մեղ ի վշտաբեր ժամանակիս սրբասնուն եղբարբեք իւրով: Արդ՝ ես Հեթում մեղուցեալ ծառա Քրիստոսի, աղաչեմ և աղերսեմ և պազատիմ սիրով Քրիստոսի առ սուրբ եկեղեցիդ յիշել զիս բարեմիտ կամօք և զսիրելի որդեական իմ զանդ-

65

70 ըանիկն Օշին և զԿոստանդին և զԼեռն և զՔոյր սոցա զԸստիթա և զամուսին իմ զԶապլուն և ողորմութիւն հայցել ի Քրիստոսէ մեղ և թողութիւն յանցանաց մեղ և ծնողաց մերոց և եղբարց և համայնց զարմից զի և ձեղ ողորմեսցի ամենաառատ պարգևաց տուօղն Աստուած, և նմա փառք յամենայն արարածոց իւրոց:

A 33595

卷之三



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220033595

204)

A 11
33595